Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականության (27 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1)

-մեկ լուսանկար 3x4 չափի

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)

- անձը հաստատող փաստաթուղթ

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

-ինքնակենսագրություն (Ձև 5)

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճանների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հունիսի 16-ից մինչև հունիսի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. հուլիսի 4-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 14 փողոց, 14: Տեղեկությունների համար զանգահարել՝ (0223) 3-28-51, (094) 40-03-32 հեռախոսահամարներով: